

## **Հանձնաժողովի իրավասությունները հանրային ծառայությունների կարգավորման բնագավառում**

Հանրային ծառայությունների կարգավորման բնագավառում ԼՂՀ Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի նպատակն է շուկաների գործունեության կանոնների, կարգավորվող սակագների և լիցենզիայի պայմանների սահմանմամբ ու վերահսկմամբ հավասարակշռել սպառողների և գործունեության լիցենզիա ունեցող անձանց շահերը, գործունեության լիցենզիա ունեցող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ և նպաստել մրցակցային շուկայի ձևավորմանն ու զարգացմանը:

Էներգետիկայի բնագավառում Հանձնաժողովը սահմանում է էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի, էներգետիկայի բնագավառում հաղորդման (փոխադրման), բաշխման, համակարգի օպերատորի, էլեկտրաէներգետիկական շուկային ծառայությունների մատուցման կարգավորվող սակագները, ինչպես նաև էլեկտրական էներգիայի և բնական գազի ներկրման առավելագույն սակագները, լիցենզավորում է էներգետիկայի բնագավառում իրականացվող գործունեությունները:

Կարգավորվող սակագների ձևավորման սկզբունքներն են՝ լիցենզիայի պայմաններին համապատասխան լիցենզավորված գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ տնտեսական գործոնների՝ հիմնավորված շահագործման և պահպանման ծախսերի, հիմնական միջոցների մաշվածության և ողջամիտ շահույթի ստացման հնարավորության ապահովումը:

Իր իրավասությունների շրջանակներում Հանձնաժողովը վերահսկում է էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց գործունեության լիցենզիայի պայմանների պահպանումը և անհրաժեշտության դեպքում կիրառում «Էներգետիկայի մասին» ԼՂՀ օրենքով սահմանված տուժանքները:

Հանձնաժողովը հաստատում, սահմանում կամ մերժում է լիցենզավորված անձանց բաժնետոմսերի գնման պայմանները (եթե պետական սեփականություն հանդիսացող գույքի մասնավորեցումը կարգավորող օրենքներով այլ բան նախատեսված չէ), ինչպես նաև լիցենզավորված անձանց կողմից մատուցվող ծառայության համար անհրաժեշտ գույքի վաճառքի կամ փոխանցման պայմանները:

Սահմանում է էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները, հաստատում է շուկայի կանոնները՝ համագործակցելով ԼՂՀ էներգետիկայի բնագավառում պետական կառավարումն իրականացնող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի հետ, սահմանում է լիցենզավորված անձանց միջև կնքվող էներգիայի ու բնական գազի մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի պարտադիր պայմանները կամ օրինակելի ձևերը, իր կողմից սահմանված կարգով գրանցում է լիցենզավորված անձանց միջև կնքված, ինչպես նաև էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման և արտահանման պայմանագրերը:

Հանձնաժողովը սահմանում է լիցենզավորված անձանց և սպառողների միջև կնքվող էներգիայի ու բնական գազի մատակարարման պայմանագրերի պարտադիր պայմանները կամ օրինակելի ձևերը և ապահովում դրանց ներդրումը:

Իրավական ակտերի մշակման ու քննարկման ժամանակացույցի համաձայն կազմակերպում է քննարկումներ լիցենզավորված անձանց միջև առաջացած տարաձայնությունների, սպառողների հարցադրումների և բողոքների, էներգիայի ու բնական գազի մատակարարման հետ կապված, այդ թվում՝ սպառողներին ներկայացված վճարման հաշիվների վիճարկման վերաբերյալ, քննարկումների արդյունքով կայացնում է որոշումներ և տալիս է պարզաբանումներ: Լիցենզիայի պայմանների կատարման վերահսկման և ներկայացված ֆինանսատնտեսական հաշվետվությունների ու տեղեկատվությունների հավաստիության ճշգրտման նպատակով իրականացնում կամ կազմակերպում է լիցենզավորված անձանց տեղակայանքների և ֆինանսատնտեսական գործունեության ուսումնասիրություններ՝ պահանջելով հիմնավորող անհրաժեշտ փաստաթղթեր:

Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով լիցենզավորված և լիցենզիա ստանալու հայտ ներկայացնող անձանցից պահանջում է բոլոր այն տեղեկություններն ու տվյալները, որոնք անհրաժեշտ են լիցենզիաների տրամադրման, սակագների սահմանման, տարաձայնությունների և այլ հարցերի քննարկման համար, սահմանում է սպառողների սպասարկման որակի վերաբերյալ ընկերություններին ներկայացվող պահանջները:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվում են լիցենզավորված անձանց կողմից ներկայացված զարգացման ներդրումային ծրագրերը, ընդունում որոշումներ՝ ապագա սակագներում ներդրումների (լրիվ կամ մասնակի) ներառման կամ մերժման վերաբերյալ, ապահովում ընդունված որոշումների կիրարկումը և մեկնաբանումը:

Ջրային հարաբերություններում Հանձնաժողովը մշակում է իրականացնում է սակագնային քաղաքականությունը, ինչպես նաև ոչ մրցակցային ջրամատակարարներին ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունները տրամադրում է օրենքով սահմանված կարգով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Ջրային օրենսգրքի» դրույթներին համապատասխան:

Հանձնաժողովը հանրային ծառայությունների կարգավորման ոլորտից օրենքով սահմանված կարգով մուտքեր է ապահովում յուրաքանչյուր տարվա ԼՂՀ պետական բյուջե: